# evocaBANK

## 2021 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# Բովանդակություն


| | |
|---|---|
| Ընդհանուր տեղեկատվություն | 03 |
| Բանկի տեսլական | 04 |
| Բանկի առաքելություն | 05 |
| Հիմնական արժեքներ և սկզբունքներ | 06 |
| Բաժնետերեր | 08 |
| Ղեկավարություն | 09 |
| Մրցանակներ | 11 |
| Բանկը՝ որպես հաշվետու թողարկող | 14 |
| Արդյունքներ | 16 |
| Ֆինանսական արդյունքներ | 25 |
| Ռիսկերի կառավարում | 29 |
| Ֆինանսական հաշվետվություն | 30 |
| Անկախ աուդիտորական եզրակացություն | 32 |
| Պատասխանատու անձանց հայտարարություն | 33 |

# Ընդհանուր տեղեկատվություն

Evocabank-ն արագ, պարզ և նորարար ծառայություններ մատուցող բանկ է, որն առանձնանում է տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ։ Մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում մոբայլ ծառայությունների զարգացմանը։

Մենք աշխատում ենք mobile-first ֆորմատով՝ յուրաքանչյուր նոր ծառայություն նախագծելիս՝ նախևառաջ հաշվի ենք առնելու դրա՝ հավելվածով օգտագործման հարմարավետությունը։



**Աշխարհը թվային է դառնում, և մենք պատրաստ ենք դրան։**

# Բանկի տեսլական

Լինել ամենանորարար և առաջադեմ բանկային ծառայություններ մատուցող ֆինանսական հաստատությունը Հայաստանում, որի բոլոր ծառայություններից հնարավոր կլինի օգտվել առանց բանկ այցելելու։

# Բանկի առաքելություն

Նորագույն տեխնոլոգիաների ակտիվ կիրառմամբ մատուցել ֆինանսական ծառայությունները պարզ, արագ և հարմարավետ եղանակով՝ գործելով mobile-first ձևաչափով։

Մենք մշտապես կատարելագործում ենք մեր ծառայությունները՝ դարձնելով մարդկանց կյանքն ավելի հարմարավետ։



# Հիմնական արժեքներ և սկզբունքներ

**Ազնվություն** Մենք ազնիվ ենք գործում բոլոր հարաբերություններում։

**Նորարարություն** Մենք շարունակաբար ներդնում և կիրառում ենք նորարարություններ՝ առաջարկելով հաճախորդներին նորագույն տեխնոլոգիաների լավագույն լուծումները։

**Հուսալիություն** Մենք կայուն ենք և հուսալի թե՛ հաճախորդների, և թե՛ գործընկերների համար։

**Թափանցիկություն** Մենք բաց ենք և թափանցիկ հանրության առջև, միաժամանակ փակ՝ հաճախորդի բանկային և առևտրային գաղտնիքի պահպանման հարցում։



**Հաճախորդների վստահություն**
Հաճախորդները մեր գործունեության կենտրոնում են. մենք գնահատում և ամուր ենք պահում հաճախորդների վստահությունը։

**Հարմարավետություն** Մենք ձգտում ենք բարելավել հաճախորդների կենսակերպը՝ դարձնելով այն առավել հարմարավետ։

**Գործարար հեղինակություն** Բարի համբավը մեր ամենաթանկ և անփոխարինելի ակտիվն է։

**Թիմային ոգի** Մենք համախմբել ենք լավագույն թիմը՝ մեր հաճախորդներին լավագույն սպասարկում ապահովելու համար։

# Բաժնետերեր



# Ղեկավարություն Բանկի Խորհուրդ



**ՎԱԶԳԵՆ ԳԵՎՈՐԿՅԱՆ**
**MBA, PHD**
Խորհրդի նախագահ



**ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**
**DR.SC., ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ**
Խորհրդի նախագահի տեղակալ



**ՖԵԼԻՔՍ ԴԻԼԱՆՅԱՆ**
**PHD**
Խորհրդի անդամ



**ՎԱՐԱԶԴԱՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ**
**MBA**
Խորհրդի անդամ



**ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**
Խորհրդի անդամ

# Ղեկավարություն Բանկի Վարչություն



**ԿԱՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
**MBA**
Վարչության նախագահ



**ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ**
**PHD**
Վարչության նախագահի առաջին տեղակալ



**ՏԱԹԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**MBA, PMP**
Վարչության նախագահի տեղակալ



**ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
Վարչության նախագահի տեղակալ



**ԼԻԼԻԹ ԳԱԲՈՅԱՆ**
**MBA**
Վարչության նախագահի տեղակալ ֆինանսական գծով



**ԷՄՄԱ ՋԱՆԻՆՅԱՆ**
**MBA, PHD, ACCA**
Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ



**ԷՄԻԼ ՍԻՄՈՆՅԱՆ**
**PHD**
Վարչության անդամ, ՏՏ բաժնի պետ



**ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆ**
Վարչության անդամ, Ծրագրավորման բաժնի պետ



**ՏԱԹԵՎԻԿ ՋԱՆՈՅԱՆ**
**MBA**
Վարչության անդամ, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ

# Մրցանակներ 2021-2020

**2021**

## Լավագույն թվային բանկը Հայաստանում

Global Banking & Finance Review

**2021**

## Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում

Global Finance

**2020**

## Լավագույն մոբայլ բանկը Հայաստանում

SME Banking Club

# 2019

**2019**

**Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում**

Global Finance

**2019**

**Տարվա նոր պրոդուկտի շնորհանդես**

KamoBlog

**2019**

**Որակի գերազանցություն**

Raiffeisen Bank International

# 2018-2017

## 2018

**Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում**
Global Finance

## 2017

**Լավագույն սպառողական թվային բանկը Հայաստանում**
Global Finance

## 2017

**Տարվա լավագույն միջոցառում**
KamoBlog

# Բանկը՝ որպես հաշվետու թողարկող

**Evocabank-ը 2021թ. մարտի 3-ին թողարկեց պարտատոմսերի իր առաջին տրանշը և դրանք ավարտվեցին հենց առաջին օրը:**

Պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը կազմել է 500 մլն ՀՀ դրամ և 5 մլն ԱՄՆ դոլար, արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը՝ 10% և 5.5%, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային, շրջանառության ժամկետը՝ 30 ամիս:

Պարտատոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում գնանշվել են շուկա ստեղծողի (marketmaker) կողմից: Evocabank-ի պարտատոմսերը, առաջին անգամ հայաստանյան ֆինանսական համակարգում, հնարավոր է եղել գնել նաև online տարբերակով՝ Բանկի EvocaTOUCH հավելվածի միջոցով:

2021թ. մարտի 23-ին Բանկը թողարկեց պարտատոմսերի երկրորդ տրանշը և մի քանի ժամում տեղաբաշխեց դրանք։ 2-րդ տրանշի պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը, ինչպես և առաջին տրանշի ժամանակ, կազմել է 500 մլն ՀՀ դրամ և 5 մլն ԱՄՆ դոլար, արժեկտրոնային տարեկան եկամտաբերությունը՝ 10% և 5.5%, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ եռամսյակային, շրջանառության ժամկետը՝ 30 ամիս։

# Արդյունքներ Հաճախորդներ, նկարագրություն

## ԹՈՂԱՐԿՎԱԾ ՔԱՐՏԵՐԻ ՔԱՆԱԿԸ

| ԹՈՂԱՐԿՎԱԾ ՔԱՐՏԵՐ | 31/12/2018 | 31/12/2019 | 31/12/2020 | 31/12/2021 |
|---|---|---|---|---|
| Ընդհանուր ArCa, MasterCard և Visa թողարկված քարտեր | 65,481 | 122,430 | 152,486 | 157,425 |

## ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

| ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ | 31/12/2018 | 31/12/2019 | 31/12/2020 | 31/12/2021 |
|---|---|---|---|---|
| Իրավաբանական անձինք | 2,048 | 2,893 | 3,843 | 4,040 |
| Անհատներ | 35,280 | 58,915 | 63,188 | 60,477 |
| Ընդհանուր | 37,328 | 61,808 | 67,031 | 64,517 |

# Արդյունքներ

Թվային լուծումներ,
Նորարարություններ



## Անհպում կանխիկացում NFC տեխնոլոգիայով

Կատարեք անհպում կանխիկացում Evocabank-ի բանկոմատներից՝ օգտվելով NFC տեխնոլոգիայից:

**տեսնել ավելին**

## EvocaBot՝ հայկական առաջին վճարային բանկային բոտն Evocabank-ից

Evocabank-ը, լինելով Հայաստանի առաջին և միակ mobile-first բանկը, գործարկում է Հայաստանի առաջին ֆունկցիոնալ բանկային բոտը՝ EvocaBot-ը:

**տեսնել ավելին**

## Ողջույն, Robin!

2020-ը Evocabank-ը սկսեց տեխնո նորարարությամբ:

**տեսնել ավելին**

# Արդյունքներ Թվային լուծումներ, Պրոդուկտներ

## Evocabank-ը միացել է Սբերբանկի ակնթարթային փոխանցման համակարգին

Այսուհետ Сбербанк Онлайн բջջային հավելվածի օգտատերերը կոնտակտային տվյալներով՝ հեռախոսահամարով, կարող են գումար փոխանցել Ռուսաստանից Հայաստան Evocabank-ի քարտերին:

**տեսնել ավելին**

### Նորույթ Հայաստանում՝ Անքարտ կանխիկացում բանկոմատից

Evocabank-ի հաճախորդներն այսուհետ կարող են Բանկի բանկոմատներից գումար կանխիկացնել ԱՌԱՆՑ քարտի առկայության:

**տեսնել ավելին**

### Online ուսանողական վարկ

Առաջին անգամ Հայաստանում Evocabank-ը ներկայացնում է ուսանողական վարկի դիմելու online տարբերակ՝ EvocaTOUCH հավելվածի միջոցով:

**տեսնել ավելին**

## Հաշվի բացում և օնլայն ավանդ՝ աշխարհի ցանկացած կետից

EvocaTOUCH-ի արհեստական բանականությամբ բիոմետրիկ նույնականացման համակարգի միջոցով այժմ կարելի է բացել բանկային հաշիվ և ներդնել EvocaOnline ավանդ ընդամենը մի քանի րոպեում:

**տեսնել ավելին**



## Քո բիզնեսի լոգոն, բրենդինգն ու կայքը՝ ապառիկով

Evocabank-ն ու Digital Factory-ն
համատեղ ներկայացնում են հայկական
բիզնեսներին աջակցելու հինովացիոն լուծում:

**տեսնել ավելին**

## Evocabank 3.0

Evocabank-ը
յուրահատուկ կերպով նշեց իր 3 և Բանկի
հիմնադրման 30-ամյակը՝ առաջին անգամ
Հայաստանում կազմակերպելով լուսային դրոն շոու:

**տեսնել ավելին**

# Արդյունքներ Նորություններ, Պրոդուկտներ

## Վարկեր Evocabank-ից Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի ծրագրի շրջանակում

Evocabank-ն առաջարկում է վարկեր Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի ծրագրի շրջանակում:

**տեսնել ավելին**

### Քարտից քարտ փոխանցումներ Visa Direct-ի միջոցով

Evocabank-ը Visa International ընկերության կողմից ստացել է Visa Direct քարտից քարտ փոխանցումներ իրականացնելու արտոնագիր:

**տեսնել ավելին**

### Evocabank-ը կրկնապատկում է քո ավանդի տոկոսադրույքը

Ներդնելով ավանդ Evocabank-ում՝ մասնակցիր վիճակահանությանը և ստացիր հնարավորություն կրկնապատկելու քո ավանդի տոկոսադրույքը:

**տեսնել ավելին**

# Evocabank-ն առաջարկում է էներգաարդյունավետ վարկեր ՓՄՁ-ների համար

Evocabank-ն
առաջարկում է էներգաարդյունավետ վարկերանիհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց համար։

**տեսնել ավելին**

# Արդյունքներ Նորություններ, Կենսակերպ

## Բանկային քարտ առողջ ապրելակերպի սիրահարների համար

Evocabank-ը Mimo bike-ի
հետ համատեղ իրականացնում
է նոր նախագիծ:

**տեսնել ավելին**

## Բիոմետրիկ նույնականացում՝ EvocaTOUCH հավելվածում

Արհեստական բանականությամբ բիոմետրիկ
նույնականացման համակարգի միջոցով
Evocabank-ը հասանելի կլինի ամենուր:

**տեսնել ավելին**

# Արդյունքներ Նորություններ, Բանկային

## Evocabank-ը միացել է Եվրոպական ներդրումային բանկի վարկային ծրագրին

**Evocabank-ի** կողմից վարկային միջոցներ կտրամադրվեն ՀՀ դրամով 9.5%-ով՝ մինչև 7.5 տարի ժամկետով:

**տեսնել ավելին**

## Evocabank-ը համալրել է կանոնադրական կապիտալը

**Evocabank-ի** կապիտալը համալրվել է 2.05 մլրդ. ՀՀ դրամով:

**տեսնել ավելին**



# Ֆինանսական արդյունքներ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ




### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ




### ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ




### ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ




### ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ




### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



# Ֆինանսական արդյունքներ

Վարկային պորտֆելի կառուցվածք



# Ֆինանսական արդյունքներ

## Վարկային պորտֆելի կառուցվածք



# Ֆինանսական արդյունքներ

## Վարկային պորտֆելի կառուցվածք



# Ռիսկերի կառավարում




Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշ մինիմում 12%




Ընդհանուր իիրացվելիության նորմատիվ մինիմում 15%




Ընդհանուր իրացվելիության նորմատիվ մինիմում 60%

# Ֆինանսական հաշվետվություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի

### ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ




### ԶՈՒՏ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ




### ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ




### ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ



# Ֆինանսական հաշվետվություն

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

### Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթ. | 31 դեկտեմբերի 2020թ. | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|---|
| *Ակտիվներ* | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 16 | 37,471,183 | 26,030,924 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 17 | 18,181,073 | 16,140,569 |
| Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ | 18 | 1,179,869 | 1,120,096 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 19 | - | 1,280 |
| Ներդրումային արժեթղթեր | | | |
| - Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 20 | 14,488,608 | 1,882,145 |
| - Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 20 | - | 489,177 |
| - Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 20 | 5,728,670 | 8,840,490 |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | 21 | 111,716,348 | 101,556,815 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 22 | 9,517,804 | 5,967,151 |
| Հետաձգված հարկային ակտիվ | 15 | - | 31,283 |
| Ընթացիկ շահութահարկի գծով ակտիվ | | 370,530 | - |
| Բռնագանձված ակտիվներ | 23 | 2,072,059 | 2,129,642 |
| Այլ ակտիվներ | 24 | 694,173 | 927,935 |
| Ընդամենը՝ ակտիվներ | | 201,420,317 | 165,117,507 |



### Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

| Հազար ՀՀ դրամ | Ծանոթ. | 31 դեկտեմբերի 2020թ. | 31 դեկտեմբերի 2019թ. |
|---|---|---|---|
| *Պարտավորություններ և սեփական կապիտալ* | | | |
| Պարտավորություններ | | | |
| Պարտավորություններ բանկերի նկատմամբ | 25 | 2,749,926 | 4,096,505 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | 26 | 16,524,178 | 12,713,336 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 27 | 124,226,407 | 100,127,629 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 19 | 67,344 | 560 |
| Այլ փոխառություններ | 28 | 15,739,784 | 6,097,777 |
| Ստորադաս փոխառություններ | 29 | 5,303,185 | 10,261,764 |
| Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն | | - | 310,307 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 15 | 620,955 | - |
| Այլ պարտավորություններ | 30 | 2,340,136 | 1,921,441 |
| Ընդամենը՝ պարտավորություններ | | 167,571,915 | 135,529,319 |
| Սեփական կապիտալ | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 31 | 20,000,000 | 17,950,000 |
| Գլխավոր պահուստ | | 1,000,000 | 262,075 |
| Այլ պահուստներ | | 3,529,008 | 1,674,927 |
| Չբաշխված շահույթ | | 9,319,394 | 9,701,186 |
| Ընդամենը՝ սեփական կապիտալ | | 33,848,402 | 29,588,188 |
| Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ | | 201,420,317 | 165,117,507 |

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2021թ. ապրիլի 12-ին:

Կարեն Եղիազարյան
Վարչության նախագահ

Էմմա Զանինյան
Գլխավոր հաշվապահ, վարչության անդամ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 14-ից մինչև 98-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Անկախ աուդիտորական եզրակացություն



Grant Thornton

## Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9

Հ + 374 10 500 964
Ֆ + 374 10 500 961

**Grant Thornton CJSC**
**Yerevan Plaza Business Center**
**9 Grigor Lusavorich street**
**0015 Yerevan, Armenia**

**T + 374 10 500 964**
**F + 374 10 500 961**

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին

*Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

*Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական

www.grantthornton.am



Grant Thornton



Grant Thornton

# Պատասխանատու անձանց հայտարարություն

## Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Evocabank-ի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը։

2. 2020 թվականի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ։

# Պատասխանատու անձանց հայտարարություն

**ԿԱՐԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
Վարչության նախագահ

**ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ**
Վարչության նախագահի
առաջին տեղակալ

**ՏԱԹԵՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
Վարչության նախագահի տեղակալ

**ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
Վարչության նախագահի
տեղակալ

**ԼԻԼԻԹ ԳԱԲՈՅԱՆ**
Վարչության նախագահի
տեղակալ ֆինանսական գծով

**ԷՄՄԱ ՋԱՆԻՆՅԱՆ**
Վարչության անդամ,
Գլխավոր հաշվապահ

**ԷՄԻԼ ՍԻՄՈՆՅԱՆ**
Վարչության անդամ,
ՏՏ բաժնի պետ

**ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆ**
Վարչության անդամ,
Ծրագրավորման բաժնի պետ

**ՏԱԹԵՎԻԿ ՋԱՆՈՅԱՆ**
Վարչության անդամ,
Մարդկային ռեսուրսների
կառավարման բաժնի պետ

evocaBANK

HELLO@EVOCABANK.AM | (+374 10) 60 55 55
ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 44/2, 0010